



Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՋԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՒ 11.

ՀՐԶԱՆ ՄԻԱՄԵԱՅ

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1866

ԱԶԳԱՅԻՆ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԿՈՂՄԵՆ ԽՐԿՈՒԱԾ

ՀՐԶԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ՄԻ

ԱՆՍԱՐԶԻ մէջ ամեն բարիք ունի իւր ներհակը, ու ամեն բարի սովորութիւն՝ իւր զեղծումը: Յայտնի է որ զեղծում մի ոչ իբր չար, այլ իբրեւ բարի եւ օգտակար, և եթէ կրօնական է այն՝ իբրեւ հոգւոյ շահաւէտ սակաւ առ սակաւ սպրդած մտած է ազգին եւ կամ եկեղեցւոյ մէջ. որոնք ուրիշ բառիւ՝ աւելորդապաշտութիւն ալ կը կոչուին: Սեր հայկական բուն եւ կեղեցին ազատ է ի սկզբանէ անտի լուսաւորութեան՝ այս օրինակ զեղծումներէ. բայց ոչ եւ արտաքին եւ կեղեցւոյ եղած ազգային սովորութեանց մէջ. որ մինչեւ ցայսօր դեռ շատ տեղուանք կը տեսնուին, մանաւանդ այնպիսի քաղաքներ՝ որոնք քա-

ղաքականապէս լուսաւորեալ սահմաններէն հեռու են: Սրբազան տեղուանք ուխտագնացութիւն ընել ոչ միայն քրիստոնէութեան, այլեւ հին եկեղեցւոյ ժամանակն ալ կար, որ կրօնական պարտաւորութիւն մի սեպուած էր գէթ կենացը մէջ անգամ մի ուխտի երթալու այն տեղուանքը: Այս բարի սովորութիւնը, թէպէտ ոմանք ռամկութեան ընծայելու ըլլան եւ անօգուտ հոգւոյ նկատմամբ, այսու ամենայնիւ խիստ լուսաւորեալ ազգաց մէջ ալ մինչեւ ցարդ կը տեսնենք որ մեծ ջերմեռանդութիւն հեռաւոր երկիրներէ կը փութան կրօնական ճամբորդութիւն ընելու, մանաւանդ Արուսաղէմ, որ կեդրոն

է բոլոր ուխտատեղեաց : Եւ ուխտաւոր մի այն աստիճանի պատիւ ու մեծարանք կ'ընդունէր իւր հայրենակիցներէն, որ մինչեւ ի դարձին կը փութային նահապետական խիստ հին սովորութիւնը ի դարձ գնելու՝ անոր ոտքերը լուսլուլ, և ընծայիւք անոր զիմացն աճապարելով. այս սովորութիւնները մինչեւ ցարդ տեղ տեղ կան, մինչեւ մահմետականաց մէջ, որոնք աւելի մօտ են նահապետական ծէսերու : Սակայն՝ ինչպէս որ ըսինք, բարի սովորութիւն մի զեղծումն կը բերելով, եթէ այն զեղծումը անձնական շահու գալչի, բնականապէս սովորութիւնը խափանուելու կը ըսկըսի. անոր կը հետեւի բարեպաշտութեան եւ ջերմեռանդութեան նուազումն, և այս ալ կը ծնանի կրօնի անտարբերութիւնը ռամիկ ու անուսումն մտքերու մէջ : Եւս զեղծումները մեր ազգին մէջն սլ կան, որոնք կոնդակիս մէջ բացատրուած են փոքր ի շատէ : Եւ ինչպէս որ մեր բարեյիշատակ նախորդաց ժամանակ՝ նոյնպէս եւ երկու տարիէն ի վեր է, բարեպաշտ ուխտաւորաց մէջէն շատերը խնդրած են Ս. Եւթուէս յիշեալ զեղծումներուն եւ անօգուտ սովորութեանց առաջն առնելու համար չըջաբերական մի յուզարկել առեկեղեցիս Հայոց, եւ յորդորել զժողովուրդը որ այնպիսի անօգուտ սովորութիւնները՝ որ մեծամեծ ծախքերու գուռ են, մէկդի թողլով, ինչ որ հոգեւոր է եւ հոգեոյ շահաւոր՝ անոր միայն հետեւին :

Եւս զեղծումներէն առաջ եկած մասնաւոր շահերու վնասները մէկդի թողլով, միայն սուրբ Եւթուէս առնեց պատճառաւ հասարակութեան տարապարտ զրոյցներու ու անհիմն կարծիքներու երթաւոր ըլլալը խօ-

սինք : Թուաբանական առածին, այսինքն երկու անգամ երկու շորս կ'ընէ ըսածին պէս, իբր բնական ճշմարտութիւն ըմբռնած են հասարակութեան մէջէն շատերը, (ասոնցմէ գուրս են ուխտի եկողները՝ որոնք անձնական փորձով դիտեն սխալ ըլլալը), թէ ուխտաւոր մի հետը բերած ստակի գումարին կէսը սուրբ Եւթուէս մէջ կը թողու : Եւս կարծեաց յենով՝ առանց թուաբանութեան դժուարին ու կնճռալից հաշիւներու դիմելու, այլ միայն համեմատական թուարկութեամբ, այնպիսի գումար մի գոյացած կը գրտնեն իրենց աչքին զիմացը, որոնք ապշելով ու վեր ու վար ցատկելով ուրախութեամբ մի կը սկսին ճշալ, եւ անկէ ազգային մեծամեծ օգուտներ երազել, եւ ազգին մէջ հսկայաբոյլ յառաջագիմութեան ասպարէզ բանալու միջոցներ երեւակայել : Կարծես թէ մարգարէին գուշակութիւնը մեր ազգին եւ այս կտորին համար է. «Օ՛րբք ձեր երազովք երազեսցին, կ'ըսէ, եւ երկտասարդք ձեր ատիւս տեսցեն» (1), ի թէ այս հաշիւներէն խաբուելով ըսած ու գրած չէ՞ երկտասարդ խմբագրին մէկը, որ սուրբ Եւթուէս այս նեղ ժամանակիս մէջ ըստ ձեռնհասութեան իւրում Հայաստանի շատ քաղաքացիորդներուն գրքեր խրկել քիչ սեպելով, տղայաբար կ'առաջարկէ որ վարժապետներ խրկուի սուրբ Եւթուէս կողմէն եւ ամեն տեղ դպրոցներ հաստատուէ. չմտածէր նա որ այս տղայամիտ ու գահափիւծ առաջարկութեամբ մեծագոր տէրութեան մի շիրջած ըրած դործքը, կրօնական պարզ միաբանութենէ կը պահանջէ,

(1) Յովէլ Բ. 28 :

որով և հասարակութեան ծիծաղը կը
շարժէ : Տաճկական առածին տեղն
է . ներքինը լի՝ է՛յրէ , Երբէն լի՛ւր
լի , լի յապիով առ այժմ՝ բաւականաւ
լով , թողունք հասարակութեան որ
ուշի ուշով կ'որդան չըջաբերական
կոնդակին օրինակը :

Ի սուրբ եւ փառաւորեալ , Աստ.
ուածագարդ եւ մեծապայծառ , շնոր-
հաճաւալ և Քրիստոսակոխ սրբոյ քա-
ղաքէս Արուսաղէմէ , եւ յամենայն
փրկագործ տնօրինական սուրբ Տեղ-
եացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ,
եւայն , եւայն : Եւ ի սոցին սպա-
սաւոր և վերատեսուչ ի Տէր ԵՍԱՅԻ
Արքեպիսկոպոսէ և Պատրիարքէ սրբ.
բոյ մայրաքաղաքիս Արուսաղէմի : Յո-
րոց ժամանեալ հասցէ գիր օրհնու-
թեան և նամակ պահպանութեան ի
վերայ հոգեւոր Քրիստոսասէր ջերմ
եռանդ ժողովրդոց մերոց բնակելոց
ընդ ամենայն կողմանս , եւայն :

Եւ ընդ աստուածապարգեւ օրհ-
նութեանս յայտ առնեմք մեր հոգե-
ւոր զաւակաց եւ բարեպաշտ ժողո-
վրդոց , որ ինչպէս սովորութիւն է
ամենայն ազգաց՝ ի բնէ անտի և Առա-
քելոց ժամանակէն մինչեւ ցայսօր ,
ջերմեռանդ հաւատացեալք սուրբ
Օստկի օրերը Արուսաղէմ կը գի-
մէին իրենց ուխտն ու հոգեւոր փա-
փաքը կատարելու , եւ տնօրինական
սուրբ Տեղեացս շնորհքն ու օրհ-
նութիւնները վայելելու : Այն գե-
ղեցիկ սովորութիւնը պահած է նա-
եւ մեր ազգը , վասն որոյ տարուէ
տարի քիչ շատ ժողովուրդ ջերմե-
ռանդ ոգւով կը գիմեն անձամբ ներ-
կայ գտնուելու տնօրինական սուրբ
Խորհրդոց , որ իւրաքանչիւր որբա-
զան Տեղեաց վերայ կը կատարին ի
փառս Մարգարէն Յիսուսի Քրիս-

տոսի , որոյ շնորհն և օրհնութիւն եւ
ղեցի ի վերայ ամենեցունցդ , եւ զա-
մենեսեանդ առ հասարակ արժանի
արասցէ իւր սուրբ Տեղեաց տեսու-
թեան և շնորհաց վայելման : Այն
ջերմեռանդ և բարեպաշտ ոգին որ-
չափ որ ուրախութիւն է մեզ տեսու-
նել Հայկազուն օրհնեալ ազգիս վե-
րայ , իբր հայրենական ժառանգու-
թիւն , զոր և պարծանք իսկ կը հա-
մարիմք ազգիս և քրիստոնէութեան ,
այսու ամենայնիւ փոքր ցաւ և վիշա-
շէ մեր հայրական սրտին , երբ կը
տեսնեմք որ օրհնեալ բարեպաշտ
ուխտաւորք իրենց հոգեւոր ուխտն
ու երկրպագութիւնը կատարած ժա-
մանակին , մարմնաւոր հոգերով ալ
մեծապէս կը տագնապին , և շատ ժա-
մանակ իրենց աղօթից եւ բարեպաշ-
տական պարտաւորութեանց կատար-
մանն ալ արգելք կ'ըլլան , և այս հո-
գերն են կա՛մ առեւտուրի զբաղիլ
հետերնին բերած տարանքներով , և
կամ ասկէ ապրանքներ գնել և բարե-
կամաց և ազգականաց համար ընծա-
յացուններ առնել , որով իրենց ուխ-
տաւորութիւնը կ'ըլլայ մարմնոյ հա-
մար՝ և ոչ հոգեւոր : Աւստի շարժ-
եալ ի պարտաւորութենէ հայրական
սիրոյս , մանաւանդ թէ ոմանց ջեր-
մեռանդ եւ խոհական անձանց թա-
խանձանքներուն զիջանելով , մոռ-
ճեցինք այն գայթակղական գործքե-
րը եւ նեղութեանց պատճառները
խափանելու համար՝ առաջիկայ յոր-
գորանաց չըջաբերական կոնդակաւս
պատուիրել հայրաբար , որպէս զի
յետ այսօրիկ բարեպաշտ ուխտա-
ւորք իրենց քաղաքէն ելլելու ժամա-
նակին հացկերոյթ շտան ժողովրդին ,
ինչպէս կըլլեմք թէ շատ տեղեր կ'ը-
նեն , և ոչ մահտեսացուք իրենց բա-
րեկամաց կողմէն ընծայ մի ընդունին

ոչ հագուստի և ոչ ուտեստի վերաբերեալ, որպէս զի չպարտաւորին իրենք ալ փոխարէն ընծայից՝ սուրբ Վաղարէն պարգեւներ տանել հետերնին, որով և պատճառս տալ ու մանց ալ սրտամնայութեան, ինչպէս բնական է շատ անգամ կը պատահի: Եւ ասկէ սա անպատշաճութիւնն ալ կը հետեւի, որ ինչպէս ըսինք, ուխտաւորք փոխարէն տրուելիք ընծայացուներուն մոմտութիւնը և զանոնք գնելու զբաղմունքովը շատ անգամ կ'արգիլուին իրենց հոգեւոր ծառայութիւններէն ու պաշտամունքներէն, եւ ոչ կրնան հանգիստ ու անզբաղ մտք ուխտերնին կատարել և աղօթականութեան պարապիլ: Եւսոյնցմէ ի զատ նոյն ընծայացուներուն պատճառաւ թէ՛ մոքսատուները և թէ՛ բոլոր ճամբան որքան նեղութիւն կրելնին եւ անոնց ծանրութիւնը իրենք թող վիայեն: Աւր թողունք նաեւ հասարակաց այն սխալ հետեւութիւնը, որով կարծեն թէ ուխտաւորք հետերնին բերած ստակին գէթ կէս մասը սուրբ Աթոռոյս ուղորմութիւն և ուրիշ բարեպաշտական Տեղեաց կը շնորհեն. եւ ասկէ գոյացեալ մտացածին դումարին չափազանցութիւնը սոյն հաշուով որքան միամիտ անձանց յանգէտս մեղանշելուն պատճառ չըլլար, որոյ սխալ կարծիք ըլլալը նոյն իսկ ուխտաւորք դարձեալ կը վիայեն: Այսան ուրոյ զասոնք տեսնելով մենք, և օրհնեալ ազգիս օգուտը մտածելով՝ ներկայ օրհնութեան կոնդակաւս կը ծանուցանեմք եւ հայրական սիրով կը պատու իրեմք, որ ասկէ յետոյ թէ՛ Արուստղէմ եկած եւ թէ՛ ետ դարձած ժամանակնին բնաւ իրարու պարգեւ չտան, բաց ի օրհնեալ մոմէ, և օրհնութեան կոնդակէ, զոր

քանի մի ժամանակ է գեղեցիկ սովորութիւնն ըրած են ոմանք ճշմարիտ հոգեսէր եւ բարեպաշտ ուխտաւորք սուրբ Աթոռէս ընդունելով՝ իրենց ազնիւ բարեկամաց և կարեւոր ազգականաց ընծայ մատուցանել, իբր միակ բերք եւ պտուղ սուրբ Վաղարէս, անոր սրբազան եւ Վրիստոսական տեղեաց օրհնութիւնները տանել հետերնին, եւ փոխարէն ընդունիլ իրենց բարեկամաց սէրն ու ուրախութիւնը: Կը յուսամք սիրելի զաւակունք մեր, որ այս մեր հայրական պատուէրները սիրով կ'ընդունիք եւ կը կատարէք յօգուտ ձեր անձանց. վասն զի կան շատերն ալ որ սոյն ընծայացուաց պատճառաւ կ'արգելուին գալու եւ Վրիստոսի Աստուծոյ մերոյ սուրբ շարչարանաց Տեղեաց շնորհքն եւ օրհնութիւնը վայելելու, որ անպակաս եղիցի ի վերայ ձեր ամենեցունցդ, եւ զօրացուցէ զձեզ՝ արժանի առնելով տեսութեան սրբոյ Գերեզմանի աստ և ի հանդերձեալն երկնից սուրբ արքայ յութեան փառացն, որում փառք:

Տուաւ օրհնութեան և յորդորանաց Կոնդակս, ի սուրբ Երուսաղէմ Առաքելական Աթոռն սրբոյ Զաւովբեանց, ի թիւ շնորհաց Փրկչին 1866 Հոկտեմբեր 1:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՒԻԹ ՊԱՏԱՆԻ
Ե.

ԳՐՈՒԱԾՔԻՆ ՎԱԽՃԱՆԸ

Ասկէ քիչ տարի առաջ դեռ մանուկ էինք մենք. վերջը մեծցանք տղայ եղանք. հիմայ պատանի ենք ու քիչ